# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարության հեռ.՝ 59 68 75

№ 11/2229 «16» 02 2016թ.

Ձեր

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հայտնում ենք, որ "ՖՎ&Գ" ՍՊ ընկերությունը ՀՀ ԿԱ Ոստիկանության տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական փակ ցանցի նախագծման և կառուցման աշխատանքները սկսել է 2006 թվից, համաձայն "Պետական գնումների գործակալության" հետ կնքած Գնման Պայմանագրի (N ՄԲԱԸՁԲ-06/25, 08.08.2006թ.):

Սկսած 2007 թվից մինչ օրս, Ընկերությունը ստանձնել է և հաջողությամբ իրականացնում է վերը նշված փակ ցանցի սպասարկման, տեխնիկական վերազինման և հետագա ընդլայնման աշխատանքները կնքելով համապատասխան պայմանագիր (ՀՀ ԿԱ Ո ԾՁԲ-1, 12.09.2007թ.):

Սկսած 2009 թվից Ընկերությունը իրականացրել է ՀՀ ԿԱ Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական ցանցի նախագծման և կառուցման աշխատանքները համակցելով այն արդեն գործող ՀՀ ԿԱ Ոստիկանության համակարգի տվյալների փոխանակման համակարգչային գերատեսչական փակ ցանցի հետ:

Սկսած 2010 թվից ցանցին համակցվել են պետական այլ գերատեսչություններ, որոնց ամենօրյա գործառույթներն առնչվում են ՀՀ ԿԱ Ոստիկանության համակարգի տիրապետման տակ գտնվող տեղեկատվական շտեմարանների հետ: Դրանց թվում են՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը, ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը, "ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմ" ՊԿՀ, "Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա" ԲԲԸ, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության "Միգրացիոն պետական ծառայություն" ՊԿՀ, ՀՀ Նոտարական պալատ ՀԿ "Նորք" տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ, ՀՀ Քննչական կոմիտեի թվով մի քանի ստորաբաժանում:

Վերը նշված գերատեսչությունները ցանցին համակցելու աշխատանքները ինչպես նաև հետագա սպասարկումը ևս իրականացվում է "ՖՎ&Գ" ՍՊ ընկերության կողմից:

Սույնը տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

Ոստկանության գնդապետ Ո.Խանզրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025 Երևան,Նալբանդյան 130
հեռ. 58-07-01, 59-62-00

N 23/3-194

«23» 06. 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի

ղեկավար Ա.Զալինյանին

ՀՀ քննչական կոմիտեի նոր վարչական շենքում ՀՀ ոստիկանության գերատեսչական ցանցին միանալու նպատակով ՀՀ ոստիկանության հեռահաղորդակցության ցանցի սպասարկման ծառայությունն իրականացնող «ՖՎ ԵՎ Գ» ՍՊԸ-ին մեր կողմից տրվել է համապատասխան թույլտվություն:

Միացման աշխատանքներն իրականացնելու նպատակով, անհրաժեշտ է դիմել վերը նշված ընկերությանը (հասցեն՝ 0014, Երևան, Ազատության պող., 24 շենք, 2-րդ հարկ, հեռախոս՝ 208172, 289313, 091-401589):

Պետի ժամանակավոր պաշտոնակատար,
ոստիկանության մայոր Ս.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Մուտք N 92-6337
«24» 06 2015 թ.